ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ԽՈՍՔ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ

Թանկագին հայրենակիցներ: Արցախական աշխարհի զավակներ: Այս եզնաժամային պահերին ոչ միայն ձեզ, այլ նաև ինձ համար շատ դժվար է դուրս գալ հոգու անզսպելի խռովքների, վիրավորվածության, զայրույթի, ճարահատության, ինչ ողողող-տանող հորձանքից և «ափին կանգնած» դեպքերին նայել սթափ դատողությամբ: Սակայն հիմա, ավելի քան երբեք, մեզ հարկավոր է այդ սթափ դատողությունը, այդ բանականությունն կոչվածը, որին այս ամիսների ընթացքում այնքան անվերջորեն կոչ արեցին դիմելու և կիրառելու: Սակայն այսօր Ես ստիպված եմ մեջտեղ բերել այդ՝ մեր մեջ վատ զուգորդություններ առաջացնող բառը և զսպելով ինքս ինձ՝ ջանալ խոսել ձեզ հետ սթափ բանականությամբ, բաժանել ձեզ հետ իմ մտածումները:

Մեր տեսանելի և անտես հակառակորդները գործի են դնում ամեն բան, որպեսզի փորձության ենթարկեն արդեն մոտ կես տարի տևող ձեր գերմարդկային համբերությունը, որպեսզի ձեզ հանեն հունից, կորցնեք ձեր հավասարակշռությունը: Յավոք սրտի, հակառակ կողմը զորավոր պաշտպաններ ունի, այդ պաշտպանները հետապնդում են լայն ու բազմաշերտ նպատակներ:

Նախ՝ իրենց կողմնապահ վարքագծով, հայերի շահն ու արժանապատվությունը տորբելու գնով շահել հակառակ կողմի համակրանքն ու աստարումը և ապա գրգռել երկու հարևան ժողովուրդներին իրար դեմ, դարաբաղյան արդար շարժումները վերածել ազգամիջյան ընդհարումների և այս ամենով խանգարել վերակառուցմանը, խանգարել Մ. Ս. Գորբաչովին՝ մինչև վերջը իրականացնելու վերակառուցման գաղափարները, հասարակության դեմոկրատացմանը, հրապարակայնությանը, ապացուցելու համար, որ դեմոկրատացումը հասցնում է այսպիսի աղետավոր հետևանքների և այդ ապացուցելով՝ առաջիկա կուսակցական կոնֆերանսում շահել հավելյալ կողմնակիցներ: Այս պատճառով էլ ադրբեջանական կողմի նրկատմամբ ցուցաբերած ակնհայտ կողմնապահությունը, նրանց խրախուսելու, նորանոր «քաջագործությունների» մղելու, Լեռնային Ղարաբաղի ղեկավարների շուրջը բարոյական ճնշիչ մթնոլորտ ստեղծելու, նրանց արժանապատվությունը խոցելու անվայել պահվածքը և ապա մահ ու մեծ վայրենությունները՝ Ադրբեջանի հայ բնակչությանը սեփական տներից բռնությամբ վտարելը, այրելն ու թալանելը, և այս ամենը՝ պրովոկացիոն նպատակներով. այն է՝ Ղարաբաղի և Հայաստանի ժողովրդին տեսականորեն պահել նյարդային վիճակի մեջ և հրահրել Սումգայիթ հիշեցնող երևույթներ, ամեն կերպ ձգտելով լայնացնել երկու ժողովուրդների միջև առաջացած խորթության սահմանները, ստեղծել ավելի լայն մասշտաբի ազգամիջյան այլանոտ ընդհարումներ:

Թանկագին հայրենակիցներ, ցավալի է, որ մենք էլ, դուք էլ՝ զգալով դեպքերի այս ընթացքի պրովոկացիոն բնույթը, այնուամենայնիվ, երբեմն հանձնվում ենք դրան և ծանր է տեսնել, որ մեր հակառակորդներին երբեմն արդեն հաջողվում է մեզ հանել հավասարակշռությունից: Մինչդեռ զգաստ դատողությունը, դավադրական քայլերի «շախմատային վերլուծությունը» պետք է մեզ բոլորիս թելադրեր շհանձնվել այդ ապակողմնորոշմանը, և հանուն մեր ժողովրդի ընդհանրական շահերի մշակել իրապաշտ և խելամիտ ընթացք:

Դուք, մեր հարազատներ, լավ գիտեք, որ անցյալ 4 ամիսների ընթացքում Հայաստանի ժողովուրդը, կարծես թե խվելով ձեր նկատմամբ ունեցած անտարբերության ազդեցությունից, իր սիրո և ատելության բազմաթիվ արտահայտությունների Մոսկվա և այլուր հղած բազմաթիվ համակերների ու հեռագրերով, յոթ օր տևող՝ իր նմանը չունեցող 700 հազարի հասնող անհողդողդ ցույցերով հայտնեց իր համերաշխությունն ու հիացմունքը՝ ձեր հերոսական ընդվզումի նկատմամբ: Հիմա էլ ամեն օր շնչախեղդ հետևելով Ղարաբաղից և այլ հայաբնակ վայրերից եկող աղետավոր լուրերին, մենք պատրաստ ենք ամեն կերպ սատար կանգնել ձեզ և երբ հարկ է՝ անել նույնը: Այս բանի կենդանի ապացույցն են նորից դեպի Մոսկվա հղվող բողոքի հեռագրերը, Երևանում նորից ծայր առած ցույցերը, մայիսի 25-ի բազմահազարանոց միտինգը Թատերական հրապարակում:

Սակայն աստիճանաբար բոլորիս մեջ հասունանում է իրադրությունը իր ողջ խորքով ու տարածքով գնահատելու գիտակցությունը: Մեզ թվում է, որ ինչ-որ անհասկանալի մի դավադրությամբ ուզում են ներքա շել մեզ մի մեծ խաղի մեջ և պետք է մեծագույն զգուշություն, տակտիկորեն մշակված քայլեր՝ այդ խաղին կույլ չտալու համար: Վերակառուցման բշնամիները, թե ուրիշ ավելի մութ ուժեր, մեր շարժումն ուզում են օգտագործել իրենց հետին նպատակների համար: Նրանց ձեռնտու է, որ շարունակվեն մեր անընդմեջ ցույցերը, գործադուլները, ծավալվեն ազգամիջյան ընդհարումներ հատկապես այս օրերին, երբ Սովետական Միությունն է այցելում ԱՄՆ-ի պրեզիդենտը, երբ երկիրը նախապատրաստվում է մեկ ամիս հետո գումարելու կուսակցական կոնֆերանս, որպեսզի օգտագործեն այս ամենը՝ ներկայացնելու մեր ժողովրդին որպես անհնազանդ, պետության վրա ճնշում գործ դնող խառնակիչ տարր: Կարող է սկսվել մեր ժողովրդի նկատմամբ ընդհանուր մի հաշվեհարդար և այն ժամանակ, թանկագին դարաբաղցիներ, դուք կզգաք, թե ինչ թանկ է նստում բոլորիս վրա հայրենի Հայաստանին միանալու ձեր անժխտելիորեն արդար ու ճշմարիտ ցանկությունը, հենց այժմ՝ այս ամիսներին, լուծում տալու անգիջում պահանջը, երբ ամեն ինչից երևվում է, որ այդ պահանջը՝ դեպքերի զարգացման ներկա բարդ ու պայթուցիկ պայմաններում բավարարելը առայժմ անհնարին է:

Ձկա Ղարաբաղի ժողովուրդ, Հայաստանի ժողովուրդ, սիյուռքի ժողովուրդ: Կա մեկ ու միասնական հայ ժողովուրդ, և մեզնից ոչ ոք իրավունք չունի խորհել միայն իր հատվածի մասին և հանուն այդ հատվածի, կամա թե ակամա, վտանգի ենթարկել մեր ամբողջ ժողովրդի համազգային շահերը:

Ես կուզենայի, որ դուք, Ղարաբաղի մեր թանկագին հատկապես երիտասարդներ, իմ թանկագին որդիներ ու դուստրեր, որքան էլ ձեր մեջ բորբոքվի ձեր վիրավորվածությունը, ազգային արժանապատվությունը ոտնահարված տեսնելու զգացումը, լսեիք մեզ՝ ձեր պաշտելի Հայաստանի ավագներին և գոնե հիմա դադարեցնեիք ձեր ցույցերին և գոնե հիմա դադարեցնեիք ձեր ցույցերը, գործադուլները, զգաստանայիք, զարթնեցնեիք ձեր մեջ իմաստնորեն համբերելու՝ տվյալ պահին մեզ այնքան անհրաժեշտ ունակությունը:

Երբեմն կյանքը դասավորվում է այնպես, որ տղամարդկությունը ոչ թե անսանձ ու բարձրագոչ ընդվզումն է, գենի ու կռվի դիմելը, այլ զսպվածությունը: Իմաստուն համբերությունը նույնպես արիություն է: Թերևս ավելի դժվար մի տղամարդկություն: Ուրեմն, նորից ու նորից զինվենք այդ տղամարդությամբ, դավայել զսպվածությամբ և իմաստուն համբերությունն ունենանք հանդարտվելու, վերադառնանք մեր բնականոն կյանքին, կանգնենք մեր հաստոցների մոտ, մեր գրասեղանների առաջ, համբերաշխ ու միասնական լինենք իրար հետ, մեր ղեկավարների հետ: Սպասենք և շխանգարենք վերակառուցումը, որի առաջին հավատավորներից ենք եղել ազգերի մեջ և առաջին կիրառողներից: Սպասենք 19-րդ կուսկոնֆերանսին՝ հուսալով, որ ձեր և մեր արդար պահանջը չի մնա անհետևանք, որ դուք ավելի լայն իրավական հնարավորություններ կունենաք, երբ առայժմ ոչ աշխարհագրականորեն, ապա հոգեպես, տնտեսապես, մշակույթի բոլոր թելերով լիովին կապվելու մայր հայրենիքին, որը այսուհետև ձեզ հետ է լինելու ամեն քայլի, ձեր բոլոր նեղ ու լայն օրերին, իր հոգևոր հովանու տակ է առնելու արցախական աշխարհի իր հարազատ զավակներին՝ միշտ հավատալով, որ մի օր այդ «հոգևորը» կդառնա իրական և իսկական:

27. 5. 1988 թ.